

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Կազմել է համալսարանի պրոֆեսոր

Արմեն Ստեփանյան

Հաստատվել է համալսարանի արտոգրանու

10-11-2016թ. թիվ 61-Ն որոշմամբ

2016թ., գ.Արտաբույնք

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը .....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ .....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում .....	12
4. ՀՀՄ ֆինանսավորում .....	18
5. ՀՀՄ մոնիթորինգ .....	19

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Արտաբույնք համայնքը ունի 1122 մշտական բնակչություն, որից շուրջ 741-ը՝ 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Շատ անմխիթաբ է միջհամայնքային ճանապարհները, չնայած որ տարվա մեջ երկու անգամ կատարվում են փոսալցման աշխատանքներ: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Համայնքի դպրոցի վերանորոգում
- Համայնքի Եղեգիս գետի վրա գործող, մեծ նշանակություն ունեցող հին երկաթյա կամրջի հիմնանորոգում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Համայնքում աղբահանության կազմակերպում
- Գազաֆիկացում
- Սմբատաբերդ ամրոց և Ցախաց քար վանական համալիր տանող հանդմիջյան ճանապարհի վերանորոգում տուրիզմի զարգացման համար, որը էլ ավելի կարևոր է գյուղի բնակիչների համար, քանի որ նույն ճանապարհը տանում է յայլաներ ու խոտհարքներ:
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերի աջակցում՝ վայրի պտղի և խոտաբույսերի մթերման, փաթեթավորման կետի հիմնում:

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արտաբույնք գյուղը վերաբնակեցվել է 1828թ. մարտ ամսից: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում կառուցված, մոխրագույն տուֆից կերտած, գորգագործի հմտությամբ զարդաքանդակներով, խաչքարերով ու սրբատաշ պատերով 13-րդ դարի Սմբատաբերդ ամրոցը և Ցախաց քար եկեղեցու համալիրը /վերանորոգված/:


Այն գտնվում է ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա: Գյուղից վերև Մեղրաքարն է, իր բարձր գագաթներով, լանջերով ու սառնորակ աղբյուրներով, որի շնորհիվ խմելու ջրով համայնքն ապահովված է 85%-ով: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային և երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 17 կմ հեռավորության վրա:


Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է 1162 մարդ, մշտական բնակչությունը՝ 1120 մարդ, տնտեսությունների թիվը՝ 398:

Ստորև ներկայացված են բնակչության տարիքային սանդղակը և բնակչության բնական աճը 2014-2016թթ.:

### Բնակչության տարիքային սանդղակ



**Բնակչության բնական աճը (2014-2016թթ.)**




Համայնքի վարչական տարածքը 3255,87 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3118,34 հա:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 27 902,3 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 3 200,0 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են 5 մանրածախ վաճառքի կետեր, մեկ հյուրերի փոքր արտադրություն, որի արտադրանքի սպառման հիմնական շուկան ոչ միայն Վայոց ձոր այլև հարակից մարզերն են:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է Եղեգնաձոր քաղաքում, ինչպես նաև մայրաքաղաք Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Ցախաց քարի վանական համալիրն ու Սմբատաբերդ ամրոցը և սեզոնին ունենք տուրիստների մեծ հոսք:

Այժմ համայնքում գործում են թվով 2 հյուրատներ, որոնք հաջողությամբ գործում են, սակայն կարիք կա ավելացնելու համայնքում հյուրատների թիվը, որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ (որի փորձը արդեն կա), ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրփանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 133 (2016թ. տվյալներով) աշակերտներ: Դպրոցում գործում է նախադպրոցական կրթական ծառայություն 4-5 տարեկան երեխաների համար, որոնց թիվը 2016 թ. կազմում է թվով 11:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 51: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 191, որից հաշմանդամության թոշակ 43, կենսաթոշակառու 148:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ: Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության հետ՝ «Անասնապահության զարգացում Հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:


Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:

2016 թվականին համայնքում ձևավորվել է «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվ կազմակերպություն, որի աշխատանքների կազմակերպման արդյունքը կխթանի համայնքում գյուղատնտեսության զարգացմանը:

### 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:


Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 3180,0 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 3280,0 հազար դրամ:



**Արտաբույնք համայնքի 2013-2015թթ. եկամուտների  
և ծախսերի դինամիկան (հազար դրամ)**



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 26228,1 հազար դրամ, 01.11.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են մոտ 20 500,0 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 27 902,3 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

**2.5 Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ**

Արտաբույնք համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի

բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Համայնքի դպրոցի վերանորոգում
- Համայնքի Եղեգիս գետի վրա գործող, մեծ նշանակություն ունեցող հին երկաթյա կամրջի հիմնանորոգում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Համայնքում աղբահանության կազմակերպում
- Գազաֆիկացում
- Սմբատաբերդ ամրոց և Ցախաց քար վանական համալիր տանող հանդմիջյան ճանապարհի վերանորոգում տուրիզմի զարգացման համար, որը էլ ավելի կարևոր է գյուղի բնակիչների համար, քանի որ նույն ճանապարհը տանում է յայլաներ ու խոտհարքներ:
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերի աջակցում՝ վայրի պտղի և խոտաբույսերի մթերման, փաթեթավորման կետի հիմնում:

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

<p><b>Ուժեղ կողմեր</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ջրուաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ</li> <li>2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ</li> <li>3. Համայնքում գործող փոքր բիզնեսներ</li> </ol>	<p><b>Թույլ կողմեր</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին</li> <li>2. Զբաղվածության խնդիր</li> <li>3. Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ</li> </ol>
<p><b>SWOT վերլուծություն</b></p>	
<p><b>Հնարավորություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր</li> <li>2. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ</li> <li>3. Համագործակցության շրջանակների ընդլայնում</li> </ol>	<p><b>Վտանգներ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքում բնակչության միգրացիայի աճ</li> <li>2. Սոցիալ-տնտեսական բնագավառի իրավիճակի վատթարացում</li> </ol>

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ**

**3.1 Համայնքի զարգացման տեսլական**

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

### 3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

#### ԾՐԱԳԻՐ 1

##### Գյուղամիջյան գլխավոր ճանապարհի ասֆալտապատում

Զբոսաշրջությունը զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի ենթակառուցվածքների բարելավումը: Գյուղամիջյան ճանապարհները անբարեկարգ են: Չնայած պարբերաբար կատարվում են հողով փոսալցման աշխատանքներ, սակայն անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել ասֆալտապատելու գյուղամիջյան ճանապարհները /4,5 կմ/: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

#### ԾՐԱԳԻՐ 2

##### Համայնքի Եղեգիս գետի վրա գործող հին երկաթյա կամրջի հիմնանորոգում և հանդամիջյան ճանապարհի բարեկարգում

Արտաբույնք համայնքում է գտնվում պատմամշակութային հուշարձաններ՝ Ցախաց քարի վանական համալիրն ու Սմբատաբերդ ամրոցը և սեզոնին ունենք տուրիստների մեծ հոսք: Սակայն <Շորեր> կոչվող տարածքում գտնվող կենսական մեծ նշանակություն ունեցող կամրջի խարխուլ վիճակից բացի, անբարեկարգ վիճակում է գտնվում և Ցախաց քար, և Սմբատաբերդ և դեպի <Սև աղբյուր> տանող հանդամիջյան ճանապարհները, որը լուրջ խոչնդոտ է հանդիսանում ինչպես համայնքի բնակիչների, այնպես էլ տուրիստների համար: Ծրագիրը որպես առջնահերթ խնդիր կֆինանսավորվի 2017 թվականի համայնքի տարեկան բյուջեից, ինչպես նաև անհրաժեշտ է խնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև, խնդրին լուծում տալու համար:

### ԾՐԱԳԻՐ 3

#### Համայնքի դպրոցի վերանորոգում

Համայնքի համար կարևորագույն խնդիր է միջնակարգ դպրոցի շենքային վիճակը: Դասասենյակները շատ մեծ են, ջեռուցում չկա: Ձմռանը դասասենյակներում չի պահպանվում մինիմում ջերմաստիճանային պայմանները: Այդ դեպքում խնդիր ունենք մեր ապագայի երեխաների առողջության հետ: Դպրոցի վերակառուցումը ընդգրկվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /ՀՏԶ/ կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման /ՄՆՏԶ/ ծրագրում, որի նախնական արժեքը կազմում է 191 541 672 դրամ: Նշված գումարի 4 տոկոսը պետք է ապահովի համայնքը՝ 7 661 666 դրամ: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

### ԾՐԱԳԻՐ 4

#### Համայնքում աղբահանության կազմակերպում

Համայնքում չկա աղբահանություն: Գյուղի միջով հոսող Եղեգիս գետը կորցրել է իր գեղեցկությունը, և իր ողջ երկայնքով դարձել է ուղակի աղբավայր: Աղբը անխնա թափվում է թե ուղղակի գետի մեջ և թե ավերին: Տեսարանը շատ տհաճ է, բացի դա այդ ամբողջ աղբը / պլաստիկ շշերը, պոլիէթիլենային տոպրակները և այլն/ իրական աղետ են ներկայացնում շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Անհրաժեշտ է համագործակցել համապատասխան կազմակերպությունների հետ և կազմակերպել համայնքում աղբահանություն: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ. համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների հաշվին, հատկացնելով մոտ 1 500 000 դրամ:

## ԾՐԱԳԻՐ 5

### Համայնքի գլխավոր փողոցների լուսավորություն

Համայնքի համար կարևոր և կենսական նշանակություն ունի փողոցային լուսավորությունը: Տեղատեղ դեռ պահպանվում են նախկինում եղած էլեկտրասյուները, ինչպես նաև համայնքը ձեռք է բերել նոր էլեկտրասյուներ: Ծրագիրը իրականացնելու համար պետք է նախատեսել տաջիկա երկու տարում ֆինանսական միջոցներ և իրականացնել այդ նախաձեռնությունը:

## ԾՐԱԳԻՐ 6

### Համայնքի գազաֆիկացում

Համայնքի համար կարևորագույն խնդիր է նաև բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում, ինչը լուրջ խոչընդոտ է հանդիսանում ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչը սոցիալական ծանր բեռ է հանդիսանում: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

## ԾՐԱԳԻՐ 7

### Աջակցել համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերին:

1. Համայնքի համար գերակա ճյուղ ճանաչել զբոսաշրջությունը, ստեղծել բարենպաստ պայմաններ զբոսաշրջության զարգացման համար,
2. Աջակցել անհատ տնտեսավարողներին տնային տուրզվի և գիշերակացների կազմակերպման գործում,

3. Հետևողական լինել համայնքի սանիտարական վիճակին, կազմակերպել աղբահանության հետ կապված ծառայությունները, ավելի մաքուր և զբոսաշրջության համար գրավիչ համայնք ունենալու համար,
4. Կաթի վերամշակման ծրագրի իրականացման աշխատանքներ
5. Համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ համայնքում ջերմոցային տնտեսություններ, սառնարանային տնտեսություններ, անասնապահական և թռչնաբուծական ֆերմաներ ստեղծելու համար, համապատասխան տնտեսվարողների հետ համատեղ կանոնակարգել դաշտը:
6. Աշխատանքներ տանել համայնքում նորագույն տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, մասնավորապես այլընտրանքային էլեկտրոէներգիա ստանալու համար՝ արևային էներգիայի օգտագործում, հիդրոէլեկտրակայանների շահագործում:
7. Ստեղծել վայրի պտղի և խոտաբույսերի մթերման, փաթեթավորման կետ:


#### 4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

## ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

### 5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով շատ կարևոր է ՀԶԾ-ի մոնիթորինգը:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,



Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Համայնքի Եղեգիս գետի վրա գործող հին երկաթյա կամրջի հիմնանորոգում և հանդամիջյան ճանապարհի բարեկարգում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչների կյանքի բարելավում					
Ծրագրի անմիջական նպատակ	Խթանել տուրիզմի զարգացումը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքը դարձնել գրոսաշրջության կենտրոն					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2. Խոտհարքեր և յայլաներ հասնելու մատչելիություն					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1.Նախագծային աշխատանքներ</p> <p>1.2.Կառուցում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 0,5 մլն</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 19,5 մլն</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 20 մլն</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Այունիք համայնքը ունի:					
Ծրագրի հիմնական շահառուները	Արտասահմանից եկող տուրիստները և Արտաբույնք համայնքի բնակիչները					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել դեպի Ցախաց քար- Սմբատաբերդ և Խոտհարքեր, յայլաներ տանող ճանապարհը:					

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Համայնքի դպրոցի վերանորոգում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Երեխաների կրթություն և դաստիարակություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարենպաստ պայմանների ստեղծում երեխաների համար						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծնողների բավարարվածությունը դպրոցական կրթությունից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Երեխաների գոհունակությունը դպրոցի պայմաններից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Դպրոցի շենքի նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. Շինարարական աշխատանքների իրականացում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 191 ,54 մլն դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արտաբյուջե համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական սահտունները	6-18 տարեկան երեխաներ և ուսուցիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ձևայած ներկայումս Արտաբյուջե համայնքում դպրոցահասակ բոլոր երեխաները հաճախում են դպրոց, սակայն հատկապես ծմռանը մեծ դասասենյակներում չի ապահովում մինիմալ ջերմաստիճանը, և խնդիր ունենք մեր ապագայի՝ երեխաների առողջության հետ: Հարկավոր է փոքրացնել դասասենյակները և ձմռան ամիսներին ապահովել համապատասխան ջերմաստիճան:</p>						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Արտաբույնք համայնքում աղբահանության կազմակերպում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ստեղծել արդիական չափանիշներին համապատասխան աղբավայր					
Ծրագրի անմիջական նպատակ	<b>Համայնքում աղբահանության կազմակերպում</b>					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Եղեգիս գետի մաքրության պահպանում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի հիմնական գործողությունները	2. Փոքրիկ ձորակներում կուտակված աղբի վերացում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. աղբահանության իրականացում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆուկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 1,5մլն դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արտաբույնք համայնքը ունի:					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակիչները					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017					
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքում չկա աղբահանություն: Գյուղի միջով հոսող Եղեգիս գետը կորցրել է իր գեղեցկությունը, և իր ողջ երկայնքով դարձել է ուղակի աղբավայր: Աղբը անխնա թափվում է թե ուղղակի գետի մեջ և թե ափերին: Տեսարանը շատ տհաճ է , բացի դա այդ ամբողջ աղբը / պլաստիկ շէտերը, պոլիէթիլենային տուպրակները և այլն/ իրական աղետ են ներկայացնում շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Անհրաժեշտ է համագործակցել համապատասխան կազմակերպությունների հետ և կազմակերպել համայնքում աղբահանություն:</p>					

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« Համայնքի գլխավոր փողոցների լուսավորություն»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջհամայնքային փողոցների լուսավորում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչների կյանքի բարելավում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. լուսավոր փողոցներ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2. բարեկարգ փողոցներ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1.Նախահաշվային փաստաթղթերի կազմում.</p> <p>1.2.աշխատանքների իրականացում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝</p> <p>Ընդհանուր բյուջեն՝2-3մլն դրամ</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	<p>Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արտաբյուջե համայնքը ունի: Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արտաբյուջե համայնքը ունի:</p>					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թ.թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքի համար կարևոր և կենսական նշանակություն ունի փողոցային լուսավորությունը: Տեղ-տեղ դեռ պահպանվում են նախկինում եղած էլեկտրապյունները, ինչպես նաև համայնքը ձեռք է բերել նոր էլեկտրապյուններ: Ծրագիրը իրականացնելու համար պետք է նախատեսել առաջիկա երկու տարում ֆինանսական միջոցներ և իրականացնել այդ նախաձեռնությունը:</p>					

# Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## « Համայնքի գազաֆիկացում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչների կյանքի բարելավում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. նախագծային աշխատանքներ 1.2. կառուցում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական թառուները							
Ծրագրի սկիզբ և ավարտ							
Ծրագրի համառոտ նկարագրություն							